ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1386 20.11.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ

գեներալ-լեյտենանտ

պարոն. Վ.Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի նոյեմբերի 15-ին այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արարատի ՁՊՎ: Այցելության ընթացքում արձանագրվել է, որ

1. Ինչպես նախորդ այցելության ընթացքում, այս անգամ ևս.
   - Խցերում առկա սպիտակեղենը և սրբիչները գտնվում էին կեղտոտ վիճակում
   - Զուգարանի ջրի ծորակը չէր աշխատում և անհրաժեշտ էր կատարել օդափոխություն
   - ՁՊՎ-ի գրանցամատյաններում կատարվող գրառումները կատարվում են ջնջումներով, մասնավորապես փոփոխվում են ժամերը

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 4976
«25» 11 2013 թ.

2. Թերություններ
   - ՁՊՎ-ի բուժսենյակում որևէ տեսակի դեղորայք առկա չէր
   - Սանհանգույցում բացակայում էր հիգիենիկ թուղթը և տաք ջուրը
   - «Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու գրանցամատյանը լրացվում է խախտումներով: Օրինակ՝ N129 հերթական համարից հետո լրացված է N 30 և այդպես շարունակական մինչև N99 և N 100, N 101...: */փաստը հաստատող նկարներ – 1,2,3,4,5/*

«Ոստիկանության Հարաբերություններ
Մուտք թիվ 7942
«25» 11 2013 թ.

3. Խախտումներ

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

- Ռուբիկ Սիրեկանի Վարդանյան – ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ՁՊՎ է ընդունվել 02.11.2013թ-ին ժամը 16^{30}, սակայն ձերբակալման արձանագրությունը կազմվել է քննիչի սենյակում 02.11.2013թ-ի ժամը 16^{25}-16^{35}, այն ժամանակ, երբ նա արդեն իսկ գտնվել է ՁՊՎ-ում: Արդյունքում՝ ՁՊՎ-ի վարչակազմը առանց բավարար հիմքերի անձին ընդունել է ՁՊՎ: */փաստը հաստատող նկարներ –6,7/*
- <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում բացակայում է անձանց բուժօգնության համար խցից դուրս բերելու գրառումները:
- Սուրեն Մուշեղի Կարապետյանը 11.07.2013թ-ին ժամը 13^{05} և ժամը 12^{30} ստացել է բուժօգնություն շտապօգնության բժիշկների կողմից /ժամերը ջնջված և փոխված են/, սակայն ցուցաբերած օգնության վերաբերյալ գրառումների դիմաց ՁՊՎ-ի օրվա հերթապահ ոստիկանը հաստատել է իր անուն ազգանունով և ստորագրությունով: Արդյունքում՝ կարելի է եզրակացնել, որ հերթապահ ոստիկանն է ցույց տվել բուժօգնություն, իսկ եթե ոչ՝ ապա ինչու է բժշկի կողմից կատարած գրառման դիմաց հաստատել ոստիկանը: */փաստը հաստատող նկար – 8/*

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացված իրավախախտումների վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-_____ <<____>> _____ 2013թ.

Ձեր 20.11.2013թ. թիվ 2621/1386 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ նոյեմբերի 15-ին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումները և թերությունները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր վարչությունում, իսկ Արարատի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Նշված խախտումների 1-ին կետի վերաբերյալ հայտնվում է, որ Ռ.Վարդանյանը քննիչի կողմից ձերբակալվել է 02.11.2013թ. ժամը 16.25-ին և ՁՊՎ տեղափոխվել 16.30-ին, իսկ ժամը 16.35-ին համաձայն ՀՀ քր. դատ. օր-ի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի ՁՊՎ-ից հեռախոսազանգի միջոցով Ռ.Վարդանյանի որդուն իրազեկվել է հոր գտնվելու մասին, որը նշվել է ձերբակալման արձանագրության մեջ:

Այսպիսով անհասկանալի է թե դիտորդների խումբը որտեղից է արձանագրել, որ ձերբակալման արձանագրությունը կազմվել է ժամը 16.25-ից մինչև 16.35-ը ընկած ժամանակահատվածում:

Դիտորդների կողմից արձանագրված մյուս բոլոր թերությունները և խախտումները կատարված ուսումնասիրությունների և ծառայողական քննության արդյունքում հիմնավորվել են, որոնցից մի մասը արդեն իսկ վերացվել է:

Ծառայողական քննության արդյունքում բաժնի հերթապահ մասի պետը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, իսկ մի խումբ ծառայողներ խիստ նախազգուշացվել են:

Միաժամանակ հայտնվում է, որ ոստիկանության Արարատի մարզային վարչության ղեկավարության կողմից համապատասխան հանձնարարական է տրվել ՁՊՎ վարչակազմին՝ արձանագրված թերություններն ու խախտումները վերացնելու և հետագայում նմանօրինակ դեպքերը բացառելու համար:

ՀՀ ոստիկանության շտաբ